ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ 150 ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ՆՈՐ ԴԱՐԱԳԼՈՒԽ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից և միացումը Ռուսաստանին նոր էջ, նոր դարագլուխ բացեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Պատմական այդ նշանավոր ակտը խոշոր ազդեցություն ունեցավ արևելահայության սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման հետագա ընթացքի վրա։

Հայաստանի միացումը Ռուսաստանին սերտորեն կապված էր ռազմաքաղաքական այն իրադրության հետ, որ ստեղծվել էր Անդրկովկասում XIX դարի սկզբներին։ Այս շրջանում ցարական կառավարության կովկասյան քաղաքականությունն ավելի ակտիվ դարձավ։ 1801 թ. Վրաստանը միացավ Ռուսաստանին։ Ռուս-պարսկական 1804—1813 թթ. պատերազմի ժամանակ ռուսական կայսրության մեջ ընդգրկվեց Ադրբեջանի մեծ մասը։ Քաղաքական դեպքերի այս շղթայի հաջորդ օղակը հանդիսացավ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, որի շնորհիվ էլ Արևելյան Հայաստանը ազատագրվեց պարսկական խաների ծանր լծից և միավորվեց Ռուսաստանի հետ։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի նախահարձակը Պարսկաստանն էր, որի զորքերը 1826 թ. հուլիսին հանկարծակի, առանց պատերազմ հայտարարելու, ներխուժեցին Անդրկովկասի այն մասերը, որոնք արդեն միացված էին Ռուսաստանին։ Ձեռնարկելով այդ քայլը, Իրանի շահը նպատակ ուներ չեղյալ հայտարարել 1813 թ. կնքված Գյուլիստանի պայմանագիրը և վերականգնել իր տիրապետությունը ամբողջ Անդրկովկասում։

Օգտվելով նախահարձակի առավելություններից, պարսից զորքերը, որոնց գլխավորում էր թագաժառանգ Աբբաս-Միրզան, սկզբում ունեցան որոշ հաջողություններ, սակայն սեպտեմբեր ամսին ռուսական բանակն անցավ հակահարձակման և կարճ ժամանակամիջոցում պարտության մատնեց և ետ շպրտեց թշնամուն։

Պատերազմական գործողությունները շարունակվեցին հաջորդ տարում՝ 1827 թ.։ Հաջողությամբ իրականացնելով հրամանատարության ծրագիրը, ռուսական զորքերը գարնան և ամռան ամիսներին գրավեցին Արարատյան դաշտի մեծ մասը՝ Էջմիածինը, Նախիջևանը, Աբասաբադը և մի շարք այլ քաղաքներ ու ավաններ։ Օգոստոսի 17-ին տեղի ունեցավ Օշականի հայտնի հակատամարտը, որի ժամանակ ռուսական մոտ երեք հազար մարտիկներից բաղկացած զորամասը կարևոր հաղթանակ տարավ թշնամու նկատմամբ, որի զորքի թիվը 30.000 էր։ Սեպտեմբերի 20-ին գրավվեց Սարդարապատը, իսկ հոկտեմբերի 1 (13)-ին, վեցօրյա պաշարումից հետո՝ Երևանը։

Երևանի և ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական տիրապետությունից անսահման ուրախություն և ոգևորություն առաջացրեց ոչ միայն կովկասահայության մեջ, այլև Ռուսաստանի ու այլ երկրների հայաբնակ վայրերում ու հայկական գաղթօջախներում։ Այն ամենուրեք դիտվեց որպես հայ ժողովրդի ազգային տոն, որպես ազատագրական շարժման նշանավոր իրադարձություն։ Հայ ժողովրդական մասսաների այդ տրամադրությունները վառ կերպով արտահայտված են Խաչատուր Աբովյանի անմահ «Վերք Հայաստանիում»։

Ռուսական զորքերի վճռական հաղթանակները ստիպեցին Պարսկաստանին դադարեցնել պատերազմը և հաշտություն խնդրել։ 1828 թ. փետրվարի 10(22)-ին կնքվեց Թուրքմենչայի պայմանագիրը, որով Արևելյան Հայաստանը վերջնականապես միացվեց Ռուսաստանին։ Անդրկովկասում ռուսական կայսրության և Իրանի սահմանագիծը դարձավ Արաքս գետը, սահմանագիծ, որին վաղուց ձգտում էր ռուսական պետությունը։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմը, որի շնորհիվ Արևելյան Հայաստանը փրկվեց խանական ծանր լծից ու միավորվեց Ռուսաստանի հետ, անկախ ցարական կառավարության սուբյեկտիվ ցանկություններից, հայ ժողովրդի համար ազատագրական բնույթ ուներ։ Այդ է պատճառը, որ հայ ազատագրական շարժման գործիչները և ժողովրդի լայն խավերը պատերազմական գործողությունների ամբողջ ընթացքում ամեն կերպ օգնում էին ռուսական զորքերին՝ նրանց հաղթանակն ապահովելու համար։ Հայերի ռուսական կողմնորոշումը, որ ձևավորվեց XVII դարում, դարձավ համաժողովրդական XVIII դարում և ավելի ամրապնդվեց XIX դարի սկզբներին։ Այս շրջանի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, հատկապես, կազմակերպվեցին հայ, վրաց ու ազրբեջանական հետևակ ու հեծյալ բազմաթիվ աշխարհազորային խմբեր ու գումարտակներ, որոնք մասնակցելով ռազմական գործողություններին, զգալի չափով նպաստեցին ռուսական զենքի հաղթանակին։

Հայ կամավորական ու աշխարհազորային ջոկատներ կազմակերպելու ուղղությամբ առանձնապես մեծ եռանդ գործադրեցին ականավոր քաղաքական գործիչ Ներսես Աշտարակեցին և բանաստեղծ Հարություն Ալամդարյանը։ Դեռևս պատերազմի առաջին օրերին (1826 թ. հուլիսի 29-ին) Ներսես Աշտարակեցին հատուկ շրջաբերականով դիմեց Անդրկովկասի ամբողջ հայությանը՝ կոչ անելով ոտքի կանգնել և զենքը ձեռքին, ռուսական զորքերի հետ միասին կռվել պարսից խաների դեմ։ Մեծ ոգևորությամբ նա գրում էր. «Արիացե՛ք, մի վախի՛ք։ Նոցա (պարսիկների— Մ. Ն.) հանկարծակի հարձակումը անզենք և խաղաղ շինացվոց վրա՝ չէ կարող սասանացնել Ռուսիո Օգոստափառ Կայսեր անհաղթելի զորաց։ Հաստատ մնացե՛ք ձեր հավատարմության մեջ։ Աշխատեցեք խոհեմությամբ անմահացնել և փառավորել ձեր և ձեր նախնյաց հիշատակը... Ահա՛ ժամանակ, երբ ամենեքյանքդ, վերածնելով ձեր մեջ ձեր նախնյաց սխրագործությունները, միաբանությամբ պիտի քաջալերեք միմյանց ասելով՝ «մեռնենք քաջությամբ և առանց հայրենյացը դավաճանելու և այդպեսով ժառանգենք մեր նախնյաց պանծալի անունն ու փառքը...»[1]։

---

1 Ա. Երիցյանց, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մասն Ա (1800—1832 թթ.), Թիֆլիս, 1894, էջ 242։

Ներսես Աշտարակեցին նույն բովանդակությամբ դիմումներ ուղղեց Աշտարակի, Օշականի, Էջմիածնի, Սարդարապատի, Երևանի բնակչությանը: 1827 թ. գարնանից Աշտարակեցին մշտապես գտնվում էր Արարատյան դաշտավայրում գործող ռուսական բանակում, ոգևորում տեղական հայ բնակչությանը և ամեն կերպ օգնում ռուսական զորահրամանատարությանը: Վ. Պոտտոն իրավացիորեն գրել է. «Պարսկական պատերազմի ժամանակ նա արդեն 66 տարեկան էր, բայց տարիները չթուլացրեցին սրբազանի եռանդն ու կայտառությունը, որը պատրաստ էր ամեն ինչ զոհելու, միայն թե տեսներ հայրենիքի ազատագրությունը... Ներսեսի ներկայությունը ռուսական բանակում ոգևորում էր հայ ժողովրդին, նրա հայրենասիրության զգացումը հասցնում սխրագործության, հերոսության և ինքնազոհության...»[2]: Ի դեպ, Ներսես Աշտարակեցուն, որպես հայրենասերի ու քաղաքական ակտիվ գործչի, բարձր գնահատական են տվել ռուսական շատ գործիչներ և, մասնավորապես, դեկաբրիստ Ե. Լաչինովը, որն անձամբ ծանոթ էր Ներսեսին[3]:

Պատերազմի ընթացքում լայն ծավալ ստացավ հայ կամավորական շարժումը: Կազմակերպվեցին ջոկատներ Լոռի-Փամբակում, Շամշադինում, Ղարաբաղում, Արարատյան դաշտավայրում և այլուր: Առանձնապես աչքի ընկավ հայ կամավորական գունդը («Հայոց զորքը»), որ ստեղծվեց Թբիլիսիում 1827 թ. գարնանը գեներալ Սիսյագինի, Ն. Աշտարակեցու և Հ. Ալամդարյանի նախաձեռնությամբ: Ահա երկու քաղվածք այդ գնդի կանոնադրությունից, որ կոչվում էր «Առաջադրություն Հայոց նոր սարքվող զորքի համար».

«1. Հայոց զորքը կունենա բատալիոններ:

2. Բատալիոնի մեջ են մտնում հայք իրանց սեպհական ցանկությամբն:

3. Նրանք վեր են կալնվում 18 տարեկանից մինչև 30 տարեկան մարդիկ. ամա էս կանոնն հիմի չէ՛ կարող ղայիմ պահպանվիլ, միայն պահանջվում է, որ մարդս բավական զորություն ունենա պախոտ գնալու համար:

4. Նրանք ազատ կուլին իրանց օղուլուշաղովն ամենայն խարջ տալուցն և ծառայությունիցն, քանի ժամանակ որ էս ծառայության մեջ կուլին:

5. Նրանք պետք է կապվին միայն ծառայել էնքան ժամանակ, քանի կուիվն Ղզլբաշի հետ կու երկարվի, իժում նրանք կու ազատվին գնալ իրենց տներն, կամ մտնել ծառայության զորքի մեջ»:

Մի շարք տեսակետներից շատ հետաքրքիր այդ «Առաջադրության» (Կանոնադրության) հաջորդ մասում ասված էր.

«15. Յուրաքանչյուր զինվորի խազնիցն կուտան թվանք, թասմա գոտիկով պարկ, երեսուն զցելու գուլլով, բարութով և տասն չախմախի քարով:

16. Յուրաքանչյուր զինվորն պիտի ունենա յուր սեպհական խանջալն և տիլոյի պարկն ուսո վրա չորս օրվան պաշար տանելու համար:

17. Ունտեր-օֆիցերներն ունենան թուր խանչալի տեղ:

18. Օֆիցերներն ունենան մին ջուխտ զաբանչա և թուր:

19. Շուրեր՝ Զուխեն բոզ մահուտից: Արխալուխն նաշուրի մուգ ռանգն: Շալվարն նաշուրի էլի էն ռանգն: Գդակն վրացու նման: Յափնջի»[4]:

---

[2] В. Потто, Кавказская война в отдельных очерках..., т. 3, вып. 2, С. Петербург, 1887, էջ 296:

[3] Ս. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 231—232:

[4] Ա. Երիցյանց, նշվ. աշխ., էջ 277—278:

Բազմաթիվ կամավորների ու աշխարհազորայինների հետ միասին ռուսական զորքերին օգնում էին ժողովրդի ամենալայն զանգվածները։ Ազատագրական պայքարն ընդունել էր համաժողովրդական բնույթ։ Հարկ է նշել, որ պարսից խանների դեմ կռվում էին նաև վրացի ու ադրբեջանցի կամավորները։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին անմիջական մասնակցություն ունեցան Ռուսաստանի այն ժամանակվա բազմաթիվ առաջավոր, ազատամիտ գործիչներ և հեղափոխականներ։ Ռուս ժողովրդի այդ իսկական ներկայացուցիչներ, գտնվելով Կովկասյան գործող կորպուսի զանազան զորամասերում, խիզախորեն մարտնչում էին Հայաստանում և Անդրկովկասի որոշ շրջաններում դեռևս իշխող պարսկական խաների ու թուրք փաշաների դեմ և դրանով իսկ իրենց լուման էին ներդնում մասնավորապես հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ։

Ռուս ժողովրդի այդ փառապանծ զավակների շարքում էին գտնվում ռուս առաջին հեղափոխականները՝ դեկաբրիստները, մեծ գրող և հումանիստ Ալեքսանդր Գրիբոյեդովը, 1812 թ. հայրենական պատերազմի հռչակավոր partիզան, բանաստեղծ Դենիս Դավիդովը, իր ժամանակի ազատամիտ, առաջավոր գաղափարներով տոգորված Ի. Գ. Բուրցովը, Ն. Ն. Ռաևսկին, Վ. Դ. Վոլխովսկին, Ա. Մ. Միկլաշևսկին և ուրիշներ։

Ինչպես հայտնի է, Նիկոլայ I-ը, ճնշելով դեկաբրիստների ապստամբությունը, մոտ 70 աստիճանաղրկված սպա դեկաբրիստների աքսորեց Կովկաս՝ «տաք Սիբիր»։ Այստեղ աքսորվեցին նաև շտրքային դեկաբրիստներ՝ ապըստամբությանը մասնակցած զինվորներ (մոտ 2800 մարդ)։ Նրանք բոլորը գործուն մասնակցություն ունեցան ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի մարտական գործողություններում առանձնապես աչքի ընկան դեկաբրիստներ Լաչինովը, Պուշչինը, Ռինկևիչը, Դեպրերադովիչը, Դոբրինսկին, Իսկրիցկին, Օրժիցկին, Մալյուտինը, Ցերբիկովը և ուրիշներ։

Եվդոկիմ Լաչինովը, օրինակ, մասնակցեց Օշականի հայտնի ճակատամարտին, Սարդարապատ, Երևան բերդերի և մի շարք ավանների ու բնակավայրերի գրավմանը։ Հիշատակության արժանի է հատկապես նրա մասնակցությունը Օշականի ճակատամարտին։ Գեներալ-լեյտենանտ Կրասովսկին նշում է, որ շարքային Լաչինովը Օշականի ճակատամարտում ցուցաբերեց «քաջության ու անվեհերության գերազանց օրինակներ»[5]։ Միխայիլ Իվանովիչ Պուշչինը, լինելով սակրավորների գումարտակի հրամանատար, հաջողությամբ կազմակերպեց ու ղեկավարեց մի շարք բերդերի և մասնավորապես Երևանի բերդի պաշարումը։ Նիկոլայ Նիկոլաևիչ Դեպրերադովիչի մասին իր գնդի հրամանատար Ն. Ռաևսկին գրել է, որ նա «Սարդարապատ և Երևան ամրոցների պաշարման ժամանակ իրեն զրսևորեց գերազանց քաջությամբ»։ Ալեքսանդր Եֆիմովիչ Ռինկևիչը մասնակցեց բազմաթիվ մարտերի։ Նրա մասին գեներալ Պասկևիչը 1827 թ. հոկտեմբերին զեկուցել է ցարին. «Պրապորշչիկ Ռինկևիչը Թշնամու դեմ մղված մարտերում իրեն դրսևորեց որպես անվեհեր մարտիկ»։ Խիզախությամբ կռվում էին Կովկասի գործող բանակում

5 «Պատմա-բանասիրական հանդես», 1978. N 1, էջ 241։

գտնվող նաև մյուս դեկաբրիստները։ Բարեբախտաբար, պահպանվել են շատերի ծառայության ցուցակները, ուր մանրամասն արձանագրված է նրանց մասնակցությունը Հայաստանի ազատագրման համար մղված կռիվներին։

Պատերազմական գործողություններին անմիջական մասնակցություն ցույց տվեց նաև լեյբ-գվարդիայի հավաքական գունդը, որը կազմված էր Պետերբուրգում ապստամբած դեկաբրիստ զինվորներից։ Նա մեծ դեր խաղաց մասնավորապես Երևանը պարսկական խաների լծից ազատագրելու գործում։ Բերդի պաշարման ամբողջ ընթացքում շարքային դեկաբրիստները գտնվում էին պաշարող զորքերի առաջին դիրքերում։ 1827 թ. հոկտեմբերի 1-ին, Երևանի բերդի գրավման օրը, հավաքական գնդի վաշտերը, սկսելով գրոհը, առաջինը մտան բերդ։ Գնդի մարտիկները ցուցաբերեցին խիզախության և հերոսության հիանալի օրինակներ, որի համար շատերը ստացան շքանշաններ։ Հերոսաբար կռվում էին նաև Չեռնիգովյան ապստամբ գնդի զինվորները, որոնք ցրված էին տարբեր զորամասերում։

Կովկաս աքսորված դեկաբրիստներն ակտիվ մասնակցություն ունեցան նաև ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմին, այսինքն՝ պատերազմական այն գործողություններին, որոնք ծավալվեցին Արևմտյան Հայաստանում։ Կարսի, Էրզրումի, Բայբուրդի և այլ քաղաքների համար մղած կռիվներում առանձնապես աչքի ընկան նշանավոր դեկաբրիստ և գրող Ալեքսանդր Բեստուժև-Մառլինսկին, Ն. Սեմիչևը, Վ. Սուխորուկովը, Զ. Չերնիշովը, Պ. Հեմանը, Պ. Կոնովնիցինը և ուրիշներ։

Հարկ է նշել այն հանգամանքը, որ դեկաբրիստները, ի տարբերություն ցարական գեներալների ու չինովնիկների, ջերմ վերաբերմունք էին ցուցաբերում հայ ժողովրդի նկատմամբ։ Ցարական դեսպոտիզմի դեմ զենք բարձրացրած ռուս հեղափոխականները, որոնց համար հարազատ էին մարդասիրական և ժողովուրդների ազատագրության գաղափարները, մեծ ոգևորությամբ կռվում էին բռնակալ պարսկական խաների ու թուրքական փաշաների դեմ։

Մոտ երկու տարի գտնվելով Հայաստանում, դեկաբրիստներից շատերը ծանոթություն և կապեր հաստատեցին ժամանակի մի շարք հայ նշանավոր գրողների ու հասարակական-քաղաքական գործիչների հետ։ Դեկաբրիստները լավ գիտեին նշանավոր քաղաքական գործիչ Ներսես Աշտարակեցուն, բանաստեղծ Հարություն Ալամդարյանին, պրոֆեսոր, հայագետ Շահան Ջըրպետյանին, զինվորականներ Վասիլ Բեյբութովին, Լազար Լազարևին և ուրիշների։ Հուրջ հիմքեր կան կարծելու, որ ռուս հեղափոխականների հետ ծանոթ է եղել նաև Խաչատուր Աբովյանը։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին գործուն մասնակցություն ունեցան նաև ռուսական առաջավոր ազատամիտ զինվորականության ու մտավորականության բազմաթիվ այլ ներկայացուցիչներ, որոնցից մի մասը կապեր ուներ դեկաբրիստների հետ և այս կամ այն չափով ընդգրկված էր ռուս առաջին հեղափոխականների շարժման մեջ։ Այսպես, օրինակ, Իվան Գրիգորևիչ Բուրցովը (1794—1829) ռուսական բանակի կրթված ու ազատամիտ սպաներից մեկն էր։ Մասնակցել է 1812 թ. հայրենական պատերազմին, եղել է դեկաբրիստների առաջին ընկերություններից մեկի («Բարօրության միության») անդամ։ 1826 թ. բանտարկվել, ապա ծառայության համար փոխադրվել է Կովկաս։ 1827 թ. ամռան և աշնան ամիսներին մասնակցել է Հա-

յաստանում և Ադրբեջանում ծավալված պատերազմական գործողություններին։ Գեներալ Պասկևիչը 1827 թ. նոյեմբերին ցարին զեկուցում էր, որ գնդապետ Բուրցովը և իր ընկերները պարսկական զորքերի դեմ մղվող կռիվներում ցուցաբերում են արիություն և անվեհերություն։

Առանձնապես խոշոր դեր խաղաց Ի. Գ. Բուրցովը ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմում։ Նա ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել Կարսի, Ախալքալակի, Ախալցխայի գրավման ժամանակ։ 1828 թ. նոյեմբերին Բուրցովը ստացավ Գեորգիի 4-րդ աստիճանի շքանշան։ Էրզրումի գրավումից հետո Բուրցովի ջոկատը հուլիսի 7-ին տիրեց Բայբուրդ քաղաքին։ Սակայն վերջինից ոչ հեռու գտնվող Խարթ գյուղի մոտ ծավալված մարտերում նա ծանր վերք ստացավ և մահացավ երեք օր հետո՝ 1829 թ. հուլիսի 23-ին։

Իր ժամանակի աղատամիտ զինվորականներից մեկը՝ Նիկոլայ Նիկոլաևիչ Ռաևսկին (1801—1843), կապված էր դեկաբրիստների, ինչպես նաև Ա. Ս. Պուշկինի, Ա. Ս. Գրիբոյեդովի, Դ. Վ. Դավիդովի և այլ գործիչների հետ։ 1826 թ. ի թիվս այլոց բանտարկվեց նաև Ն. Ռաևսկին, սակայն չկարողանալով ապացուցել նրա «հանցանքը», ցարական կառավարությունը Ռաևսկուն ազատեց բանտից ու ուղարկեց Անդրկովկաս, նշանակելով նրան այնտեղ գտնվող Նիժեգորոդյան դրագունական գնդի հրամանատար։ Ն. Ռաևսկին ամենագործուն մասնակցությունն ունեցավ ինչպես ռուս-պարսկական 1826—1828 թթ., այնպես էլ ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմներին, հատկապես Ջիվանբուլաղի, Սարդարապատի, Երևանի, Կարսի, Ախալքալակի, Էրզրումի ու այլ քաղաքների և բերդերի համար մղված ճակատամարտերում։ Նրա խիզախությունը և զորավարական տաղանդը բազմիցս նշվել է բարձրագույն հրամանատարության կողմից։ Սակայն, չնայած դրան, «քաղաքական հանցագործներին» հովանավորելու մեղադրանքով Ն. Ռաևսկին 1830 թ. հեռացվեց Կովկասից։

Իր առաջավոր հայացքների համար Վլադիմիր Դմիտրիևիչ Վոլխովսկին (1798—1841) փոխադրվում է Կովկաս և մասնակցում ռուս-պարսկական պատերազմին, մասնավորապես Սարդարապատի և Երևանի բերդերի գրավմանը։ Բարձր հրամանատարության զեկուցագրերից մեկում ասված է, որ Սարդարապատի բերդի պաշարման ժամանակ Վոլխովսկին իրեն տրված բոլոր հանձնարարությունները «կատարեց գերազանց եռանդով ու քաջությամբ»[6]։ Ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմի ժամանակ նա գործուն մասնակցություն է ունեցել Կարսի, Էրզրումի և Բայբուրգի համար մղված մարտերին։ Վոլխովսկին, ինչպես նաև Կովկաս ուղարկված իր գրեթե բոլոր աղատամիտ ընկերները գտնվում էին գաղտնի հսկողության տակ։ Նրանց «վարքագծի» մասին պարբերաբար տեղեկություններ էին ուղարկվում Պետերբուրգ։

Ցարական սատրապների համար կասկածելի զինվորական էր նաև Ալեքսանդր Միխայլովիչ Միկլաշևսկին (1796—1831)։ Նիկոլայ I-ի հրամանով նա ևս ուղարկվեց Անդրկովկաս։ Միկլաշևսկին ակտիվ մասնակցություն ունեցավ ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի գրեթե բոլոր կարևոր ճակատամարտերին, ինչպես նաև Կարսի, Ախալցխայի, Էրզրումի գրավմանը։ Նա սպանվեց 1831 թ.։ Միկլաշևսկու մահվան կապակցությամբ գեկա-

6 Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 548, ց. 2, գ. 48, թ. 6։

բրիստ Ալեքսանդր Բեստուժև-Մառլինսկին գրել է. «Մենք դժբախտություն ունեցանք կորցնելու մեր բախտակից ընկերոջը, իր խիզախությամբ շատ հայտնի գնդապետ Միկլաշևսկուն։ Նա իսկական Այաքս էր և ընկավ որպես հերոս»[7]։

Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու գործում զգալի դեր խաղաց հռչակավոր պարտիզան, բանաստեղծ Դենիս Վասիլևիչ Դավիդովը, որը նույնպես պատկանում էր «քաղաքական անբարեհույս» գործիչների շարքին։ Երբ բռնկվեց ռուս-պարսկական պատերազմը, Դավիդովը ցարի հրամանով ուղարկվեց Թբիլիսի և շուտով, 1826 թ. սեպտեմբերին, նշանակվեց Երևանի սարդարի դեմ գործող ռուսական զորամասի հրամանատար։ Գեներալ-մայոր Դավիդովը, անցնելով հակահարձակման սեպտեմբերի 21-ին, Միրաք գյուղի մոտ պարտության մատնեց Հասան-խանի զորքերին և պարսկական հրոսակախմբերից ազատագրեց Լոռի-Փամբակն ու Շիրակը։ 1826 թ. աշնան ամիսներին, պատերազմական գործողությունների դադարի ժամանակ, նա ամրացնում էր Ջալալ-Օղլիի (այժմ՝ Ստեփանավան) բերդը։

Դավիդովի ինքնակենսագրականում, որ գրված է երրորդ դեմքով, 1826 թ. սեպտեմբերին Լոռի-Փամբակում տեղի ունեցած անցքերի մասին ասված է. «Պարսիկները ներխուժում են Վրաստան... Նա (Դավիդովը—Մ. Ն.) դուրս է պրծնում իր սիրելի ընտանիքի գրկից և շտապում է Մոսկվայից դեպի Վրաստան. տասը օրվա ընթացքում Դավիդովը Կովկասից այն կողմում էր։ Մի քանի օր ևս, և նա իր զորամասով անցնելով Բզովդալը՝ հետապնդում էր թշնամուն, որը նահանջում էր նրանից Փամբակի հարթավայրով։ Վերջապես մեկ օր ևս, և նա ամպերից վեր բարձրացող Ալագյազի մոտ պարտության է մատնում հայանի Հասան-խանի չորսհազարանոց զորամասը, ստիպելով նրան փախչել դեպի Երևանի բերդը, ուր և Գյոկչա լճից շտապում է ինքը՝ Երևանի սարդարը իր զորքերով։ Այստեղ Դավիդովի աչքերին բացվում է Արարատը իր ողջ փայլով, իր ձյունե ծածկոցով, կապույտ երկնքով և մարդկային ցեղի օրրանի մասին եղած բոլոր ավանդություններով։ Այս արշավից հետո Դավիդովը զբաղվում է Ջալալ-Օղլի ամրոցի շինարարությամբ, որն ավարտում է դեկտեմբեր ամսին»[8]։

Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու և Ռուսաստանին միացնելու գործում խոշոր դեր խաղաց ռուս մեծ գրող և հումանիստ Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովը։ 1827 թ., երբ Արարատյան դաշտում ծավալվել էին ռազմական գործողությունները պարսկական զորքերի դեմ, երբ տեղի էր ունենում Սարդարապատի և Երևանի ազատագրումը խանական լծից, Գրիբոյեդովը գտնվում էր բանակում, մասնակցում էր ռազմական գործողություններին և անում ամեն ինչ ռուսական զորքերի հաղթանակի համար։ Ռուս մեծ գրողը, ինչպես հայտնի է, խոշոր դեր կատարեց Թուրքմենչայի պայմանագրի կնքման, ինչպես նաև՝ պարսկահայերի դաղթը կազմակերպելու և նրանց ամեն կերպ օգնելու գործում։

Խոսելով Արևելյան Հայաստանի ազատագրմանը մասնակից ռուս առաջավոր մարդկանց մասին, չի կարելի չհիշատակել նաև Ն. Ն. Մուրավյովին,

---

7 «Русский вестник», 1861, № 3, էջ 313։

8 «Сочинения Д. В. Давыдова», ч. 1, М., 1860, էջ 92։

Ի. Պ. Շիպովին, Ա. Ա. Սուվորովին, Լ. Ս. Պուշկինին և շատ ուրիշների։ Նրանք բոլորը այս կամ այն չափով իրենց լուման ունեն արևելահայության նոր կյանքի կերտման գործում։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմին մասնակցեցին նաև վրաց ու ադրբեջանական ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչներ Ա. Գ. Ճավճավաձեն և Ա. Բաքիխանովը։

Խիստ հետաքրքրական է այն փաստը, որ 1826—1829 թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին մասնակցեցին նաև լեհ հեղափոխականները, որոնց ցարական կառավարությունը բանտարկել և ապա աքսորել էր Կովկաս՝ Կովկասյան գործող կորպուսում ծառայելու համար։ Նրանց թվին են պատկանում Ֆրանց Բորկովսկին, Անդրեյ Յանևիչը, Նիկոլայ Վորցելը, Ստանիսլավ Կարվիցկին, Զախը, Լիսովսկին և ուրիշներ։

Մեծ թվով դեկաբրիստների ու բազմաթիվ առաջավոր ռուս գործիչների մասնակցությունը 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին ավելի շեշտեց ու ընդգծեց այդ պատերազմի ազատագրական բնույթը։

Ավելորդ չէ այստեղ նշել այն իրողությունը, որ ռուս-պարսկական ինչպես 1804—1813, այնպես էլ 1826—1828 թթ. պատերազմների ժամանակ Ռուսաստանի դեմ կանգնած էին փաստորեն նաև արևմտյան տերությունները՝ Անգլիան ու Ֆրանսիան։ Ելնելով իրենց գաղութարարական քաղաքականության շահերից, նրանք փորձում էին Իրանի ու Թուրքիայի միջոցով ետ մղել ռուսական պետությունը Անդրկովկասից և դրա համար պարսկական և թուրքական կառավարություններին տրամադրում էին դրամ, զենք, զինամթերք, ռազմական մասնագետներ։ Անձամբ ծանոթանալով պարսկական զորքերին, Ա. Պ. Երմոլովը 1817 թ. գրում էր, թե «պարսկական հետևակը և հրետանին ամբողջությամբ գտնվում են անգլիական սպաների ու ենթասպաների հրամանատարության տակ»[9]։ Հայտնի է, որ Պարսկաստանը 1826 թ. պատերազմ սկսեց Ռուսաստանի դեմ անգլիական էմիսարների հրահրումներով։ Պատերազմի ընթացքում իրանական զորքերի շարքում Ռուսաստանի դեմ կռվում էին հրետանու բազմաթիվ անգլիացի սպաներ և այլ զինվորականներ։

Այսպիսով, եթե Ռուսաստանը օբյեկտիվորեն հանդես էր գալիս անդրկովկասյան ժողովուրդներին պարսկական դաժան տիրապետությունից ազատագրողի դերում, ապա Անգլիան և Ֆրանսիան, ընդհակառակը, օգնելով պարսկական խաներին, գործում էին որպես այդ ժողովուրդների ազատագրական շարժման թշնամիներ։ Հարկ է նկատել, որ Անգլիան և Ֆրանսիան նույն դիրքը բռնեցին նաև XIX դարի արևմտահայ ազատագրական շարժման նկատմամբ։

* * *

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, ինչպես արդեն ասացինք, պրոգրեսիվ, խոշոր իրադարձություն էր, որ նոր, լուսավոր էջ բացեց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ։ Խոսելով Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման պատմական նշանակության մասին,

---

9 АКАК. т. VI, ч. II, էջ 148—149։

պետք է նախ և առաջ ընդգծել մի կարևոր հանգամանք. միավորումից հետո վերացավ արևելահայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը, որ ստեղծվել էր պարսից խանների կոտորածների ու բռնի ասիմիլյացիայի քաղաքականության, երկրում տիրող միջֆեոդալական կռիվների ու ավազակային արշավանքների հետևանքով։ Ապահովվեց հայ բնակչության աճը, որին մեծ չափով նպաստեց պարսկահայերի և արևմտահայերի գաղթը։ Տեղի ունեցավ ժողովրդի ազգահավաքման, ազգային համախմբման պրոցեսը, որը սեծ նշանակություն ունեցավ նրա հետագա ճակատագրի համար։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումը խիստ նպաստեց երկրի տնտեսական զարգացման գործին։ Չնայած ցարական կառավարության ազգային ճնշման ու գաղութային քաղաքականության, Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության կազմում ստացավ տնտեսական զարգացման բարենպաստ հնարավորություններ։ Երկրի տնտեսությունը, որ պարսիկ խանների ու Թուրք փաշաների տիրապետության տակ լճացման և դեգրադացիայի էր ենթարկվել, Ռուսաստանի կազմում արդեն XIX դարի երկրորդ կեսին ապրեց զգալի տեղաշարժ։ Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր նշանավոր աշխատության մեջ նկատում էր, որ հետռեֆորմյան շրջանում ռուսական կապիտալիզմը «Կովկասը ներգրավում է համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ...»[10]։ Քայքայվում էր բնատնտեսությունը, զարգանում էին ապրանքափոխանակային հարաբերությունները, ներքին ու արտաքին առևտուրը և համեմատաբար ավելի դանդաղ գյուղատնտեսությունը։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացմանն Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում զգալի չափով նպաստեց գյուղացիական ռեֆորմը և խճուղային ճանապարհների ու երկաթգծի շինարարությունը։ XIX դարի երկրորդ կեսին արդեն ձևավորվեցին պղնձի արտադրության կենտրոններ Ալավերդիում ու Ջանգեզուրում, դարի վերջերին հիմնվեցին բամբակի, մետաքսի, գինու և կոնյակի արդյունաբերական ձեռնարկություններ։

Դժվար է գերագնահատել այն դրական նշանակությունը, որ ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ գիտության, գրականության ու մշակույթի բոլոր բնագավառների զարգացման գործում։ Որպես օրինակ հիշենք այն բարերար ազդեցությունը, որ ունեցավ ռուս առաջավոր հարուստ դասական գրականությունը հայ նոր գրականության վրա։ Հայտնի է, որ հայ գրականության ու հասարակական մտքի այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Գ. Սունդուկյանը, Հ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և ուրիշներ խոր հարգանքով ու ակնածանքով են խոսել ռուս ժողովրդի գրականության մասին։ Այսպես, Հովհ. Թումանյանը գրել է. «Սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև, Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ-շատերը»[11]։

---

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 771։

11 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. VI, Երևան, 1957, էջ 332։

Ռուսաստանի պրոգրեսիվ ազդեցության մասին իր ժամանակ խոսել է Ֆ. Էնգելսը։ Կ. Մարքսին 1851 թ. հղած իր նամակներից մեկում նա գրել է. «Ռուսաստանը իսկապես պրոգրեսիվ դեր է խաղում Արևելքի նկատմամբ»[12]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի «Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակի տոնակատարության մասին» ընդունած որոշման մեջ ասված է. «Ռուսաստանին միանալը հայ ժողովրդին փրկեց ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից, բացեց ազգային համախմբման հնարավորություններ, նախադրյալներ ստեղծեց հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար, նրան հաղորդակից դարձրեց ռուսական առաջավոր կուլտուրային, Ռուսաստանի հասարակական-քաղաքական մտքի դեմոկրատական ավանդույթներին» («Սովետական Հայաստան», 31 մարտի 1978 թ.)։

Մեծ է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման քաղաքական-ազատագրական նշանակությունը։ Մտնելով Ռուսական կայսրության կազմի մեջ, արևելահայությունը իր պատմական բախտը կապեց ռուս ժողովրդի, նրա ազատագրական շարժման հետ։ XIX դարի կեսերից արդեն ռուսական հեղափոխական շարժման ազդեցության տակ ձևավորվեցին հայ հասարակական-քաղաքական հոսանքները։ Հայ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը կապեր հաստատեց ռուս հեղափոխական գործիչների հետ։ XIX դարի սկզբներին հայ բանվորական ու գյուղացիական շարժումներն ընդգրկվեցին ռուսական պրոլետարական սոցիալիստական հզոր շարժման մեջ, որը և իսկական ազատություն և վերածնունդ բերեց բազմաչարչար հայ ժողովրդին։

НОВЫЙ ЭТАП В ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА

Академик АН АрмССР М. Г. ПЕРСИСЯН

(Резюме)

Присоединение Восточной Армении к России, имевшее место в результате русско-персидской войны 1826—1828 гг., явилось крупной вехой в многовековой истории армянского народа. Благодаря этому прогрессивному акту были созданы новые, благоприятные условия для развития экономической, культурной и политической жизни страны, для численного роста и национальной консолидации народа. В составе России армянский народ связал свою судьбу с русским революционным движением, которое и принесло ему подлинную свободу и национальное возрождение.

---

[12] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XXI, էջ 211։